



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՕՐԵՆՃ ԶԱՈՒՆԹԻԻ Ս. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՍԱՔՐԵՆՔ ՄԵՐ ՍԻՐՏԵՐՆ ՈՒ ԽԻՂՃԵՐԸ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ԱՂՏԵՂՈՒԹԵՆԷ
ԵՒ ԱՂՕԹՔՈՎ ԱՍՏՈՒԾՈՅ ԴԻՄԱՑ ԿԱՆԳՆԻՆՔ
ՈՒ ՀԱԲԱՏՔՈՎ ԻՐՍԷ ԼՈՅՍ ԽՆԴՐԵՆՔ

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ

Կիրակի, 18 Մարտ 2007-ին, Օրենճ Զառնթիի հայ գաղութը ապրեցաւ հոգեւորոգ պահեր, երբ Առաջնորդ Սրբազան Հայրը՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Սրբոց Զառասնից Մանկանց տօնին եւ եկեղեցւոյ անուանակոչութեան առիթով, հանդիսաւոր սուրբ պատարագ մատոյց եւ հաւատքի ամրապինդ ու հոգեթով իր քարոզով շեշտեց աղօթքին անհրաժեշտութիւնը հայ անհատին թէ ընտանիքին, հայ համայնքին ու ազգին կեանքէն ներս, իբրեւ աղբիւր վերանորոգութեան, հաւատքի ամրապնդման եւ Աստուծոյ հետ հաղորդակցութեան:

Սուրբ Սեղանին կը սպասարկէին Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ եկեղեցւոյս հոգեւոր հովիւը՝ Տ. Հրանդ Զիւլ. Երեցեան:

Զարոզի պահուն, Առաջնորդ Սրբազանը խոր վիշտով անդրադարձաւ Գալֆայեան Միաբանութեան մեծաւորուհի՝ Մայր Հռիփսիմէ Սասունեանի կորուստին, վեր առաւ անոր անսակարկ նուիրումը Հայ Եկեղեցւոյ եւ Հայ ազգին, անոր ծառայութիւնը Լիբանանէն մինչեւ Պոլիս, իր անձը ի սպաս դնելով յատկապէս հայ որբերու խնամքին ու երիտասարդ պարմանուհիներու առողջ դաստիարակութեան:

Սրբազան Հայրը քարոզի բնաբան վերցուցած էր Դատաւորի Կիրակիի նուիրումած շարականի հետեւեալ բառերը. «Ո՛րվ Զրիստոս, շնորհք ըրէ մեզի որ ամէն ժամանակ քու դիմացդ ըլլանք մաքուր աղօթքով, երկինքի անմարմիններուն նման»: Օրուան խորհուրդէն թելադրուած եւ բնաբանէն ներշնչուած, Սրբազանը վեր առաւ աղօթքին անհրաժեշտութիւնը հաւատացեալի կեանքին մէջ, աղօթքը համարելով Աստուծոյ հետ հաղորդակցելու ազդու միջոց եւ մեր խնդրանքներն ու մարդկային մեր կարիքները Ամենակալին Գահին դիմաց բարձրացնող անուշաբոյր խունկ: Սրբազանը կոչ ուղղեց բոլորին, որ իրենց սրտերը մաքրեն ամէն տեսակի աղտեղութենէ եւ խաւար մտքերէ, որպէսզի Զրիստոսի իմանալի լոյսը թափանցէ մեր սրտերէն ներս, Տիրոջ ողորմութիւնը առատ թափի մեր հոգիներուն մէջ, որպէսզի կարենանք Աստուծոյ դիմաց համարձակ կանգնիլ եւ մաքուր սրտով ու

խոնարհ հոգիով մեր աղօթքները իրեն ներկայացնել: Երբ աղօթք, ըսաւ Սրբազանը, շարականագրին բառերով ըսէք. «Ո՛վ Քրիստոս, քու անապական ծնողիդ՝ Ս. Աստուածածնի աղաչանքով մեր սրտերուն իմանալի աչքերը բաց, որպէսզի ողորմութեամբ քու լոյսիդ նայինք»:

Ապա Սրբազանը խօսեցաւ 4-րդ դարուն ապրած հաւատքի ախոյեաններուն՝ Սրբոց Քառասնից Մանկանց վարքին ու նահատակութեան մասին, որոնք Սեբաստիոյ լիճին մէջ Քրիստոսի հանդէպ իրենց ունեցած խոր սիրոյն ու կապուածութեան վկայութիւնը տուին իրենց արեան հեղումով եւ չարաչար տանջուելէ ետք իրենց նահատակութեամբ: Այսօր եւս, շեշտեց Սրբազան Յայրը, մենք բոլորս Սեբաստիոյ նահատակներուն նման պէտք է մեր հաւատքի ուխտը վերանորոգենք, մեր սիրտերն ու հոգիները աղօթքով մաքրենք եւ մեր հայրերու հաւատքով գօտեպնդուած՝ այս գաղութը պահենք միասնական ճիգով, փոխադարձ սիրով ու յարգանքով ու բարի գործակցութեամբ:

ՄԱՏԱՂՈՐՅՆԷՔ

Ս. Պատարագի աւարտին եւ հոգեհանգստեան արարողութենէն ետք, Սրբազան Յայրը, շրջապատուած հոգեւորականաց եւ դպրաց դասերով, թափօրով առաջնորդուեցաւ եկեղեցւոյ կողքին գտնուող «Ղուկասեան» սրահը, ուր, հաւատացեալներու խիտ բազմութեան ներկայութեամբ, օրհնեց եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով պատրաստուած Մատաղը: Մատաղօրհնէքի աւարտին, ներկաները յուզումով եւ խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Մեր Յայրենիք»ը:

Արարողութիւններէն ետք տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Հաւատացեալներ միասնաբար ճաշակեցին Տիկնանց Միութեան պատրաստած մատաղը: Սիրոյ ճաշի ընթացքին եկեղեցւոյս Յոգեւոր Յովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քհնյ. Երեցեան, եկեղեցւոյ ընտանիքին անունով իր որդիական սերն ու շնորհակալութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ իր օրհնաբեր ներկայութեամբ կը պատուէր գաղութը: Գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ նաեւ Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը. ան բարձր գնահատեց Տիկնանց Միութիւնը, որ առանց ձայնի ու աղմուկի, սիրայօժար պատրաստեց այսօրուան մատաղը, ինչպէս նաեւ՝ հոգեւոր հովիւը, հոգաբարձական կազմը եւ բոլոր բարերարները:

Քրիստոնէական սիրոյ եւ հայաբոյր մթնոլորտի մէջ վերջ գտաւ օրուան հոգեպարար խորհուրդն ու սիրոյ ճաշը, որմէ ետք ներկաները տուն վերադարձան հոգեկան գոհունակութեամբ եւ ուրախ սրտով:

Պ.Վ.Կ.

ON THE NAME DAY OF FORTY MARTYRS CHURCH

**LET US RID OUR HEARTS AND SOULS OF IMPURITIES AND BESEECH
GOD TO GRANT US HIS DIVINE LIGHT**

On Sunday, March 17, 2007, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted Holy Mass and delivered the sermon at Forty Martyrs Church in Orange County on the occasion of the Feast of the Forty Martyrs and the name-day of the church.

Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Hrant Yeretsian, Pastor of Forty Martyrs Church, assisted at the altar.

During his sermon, the Prelate emphasized the necessity of prayer in our individual and community lives in the renewal and strengthening of our faith and our communication with God. The Prelate also urged the parishioners to rid their hearts and minds of all impurities and to allow the light of God in their hearts and the mercy of God in their souls so as to be able to stand before God and humbly offer their prayers.

In speaking of the Forty Martyrs of Sebastia, who demonstrated their deep faith in Our Lord Jesus Christ with their martyrdom, the Prelate stressed that we must follow in their example and renew our vows of faith, purify our hearts and souls with prayer, and serve our community reinforced with the faith of our forefathers.

During requiem service, a special prayer was offered for the soul of Mother Hripsime Sassounian on the seventh day following her passing. The Prelate highlighted her devotion and service to the Armenian Church and nation and her humanitarian mission that spanned from Lebanon to Turkey.

Following church services, the Prelate and procession headed to "Gugasian" Hall where the *madaghorhnek* took place. The parishioners then collectively sang "Giligia" and "Mer Hayrenik".

During the reception that was organized by the church Ladies Association, Rev. Hrant Yeretsian expressed his sincere thanks and gratitude to the Prelate as well as to all the church servants. Executive Council Chair Dr. Garo Agopian also delivered a word of praise. In his closing remarks, the Prelate commended the efforts of all the devoted servants of the church including the Pastor, Board of Trustees, Ladies Association, and sponsors.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.